

— դան, Առգ—եաճար), ասորական անուններ (Աղ-
 դու—նաթան, Աղդու—բամ, որի մէջ լսվում է
 Աղդու—Աղագ, այսինքն ասորոց կուռքի յայտնի
 անունը, և վերջապէս արարական անուններ, Այս
 հանգամանքները ոչ միայն այն նշանակութիւնն ու-
 նին, թէ Եզրասի ժամանակ անուններն ի՛նչպէս էին
 հնչում, այլ և այն, թէ այս տեղ պատահում
 ենք անձինքներին, որոնց հայրերը կամ որդիք
 բուն բարեկական անուններով են կոչվում, մինչդեռ
 իրանք կրում են հրեական կամ պարսկական
 անուններ, որով յայտնի երևում է, թէ Պարսից
 նահանգ Բարեկանում օտար տարբերով ձուլումը
 բաւական առաջ էր գնացել, Թէ հրեայք և թէ պար-
 սիկք այն տեղ այնչափ բնիկ էին դարձել, որ նորա
 իրանց ընտանիքներով արդէն կիսով չափ բարեկա-
 նացած են հանդիսանում, որի լաւ ապացոյց է
 իրանց խառն անուանակոչութիւնը, — Մինչև այսօր
 միմիայն Եզեկիէլ մարգարէից ծանուցած Քոլբար
 գետը՝ վերոյիշեալ նորագիւտ աղիւսներում րեկ-
 ոագրով կարդացվում է «Քարբու ջրանցք», նոյն-
 պէս ևս Գանիէլի գրքից լաւ յայտնի Գեթարար
 (կարգա՛ Գաթ—բար) պարսկական պաշտօնէութեան
 անունը՝ երևան է գալիս այս տեղ «դասա-բարի»
 ձևով (Տմնա- ուստար-բարի, կարճ՝ ու-բարի
 տիտղոսը), — Ի վերջոյ առաջ ենք բերում այն առ-
 եւտրական յիշատակարաններից ամէնից կարճը.
 Բէլ—աքիզդին և Բէլ—սունու, Բէլ...-ի որդիքը,
 և Քատին, Բաղուզի որդին, ասացին Բէլ—նազին
 — սում-ին, Վուրազու-ի որդուն, այսպէս, զըմ-
 բրուխտով ընդելուզած մատանու համար մենք
 երաշխաւոր ենք, թէ զմրուխտը 20 տարուայ ըն-
 թացքում մատանուց դուրս չի ընկնի, Իսկ թէ
 ժամանակից առաջ դուրս ընկնի, այսու պարտա-
 ւորվում են վերը յիշատակած երեք (վաճառող-
 ները) Բէլ—նազին—սում-ին (գնողին) վճարել
 երեք մնաս արծաթ»:

Բարեգործական ընկերութիւններին մի օրինակ. Ըմե-
 րիկացի օրիորդ Շէնկը, մադարուելով վիրաւորեալ-
 ների օգտի համար ժողովարարութիւն անել, հնա-
 րեց հետեւեալ պարզ միջոցը, նա դիմեց իւր շորս
 բարեկամութիւններին խնդրելով, որ իրան ուղարկեն
 10 ցենտ և նամակներ գրեն— իւրաքանչիւրը 4 ծա-
 ութներին նոյնպիսի խնդրքով և առաջարկու-
 թեամբ, որ իրանց կողմից ևս խնդրքը շարունա-
 կեն միևնոյն եղանակով, Օրիորդը կենում է Բա-
 բելուն փոքրիկ քաղաքում: Մի շարաթ անցնելուց
 յետոյ՝ փոստատունը հեղեղուեցաւ օրիորդի ան-
 ուան նամակներով: Փոստի կառավարիչը հարկա-
 գրուեցաւ յատուկ օգնական վարձել, Օրիորդի
 նամակները շատ շուտ հասան օրական 3500-ի, — և
 այն մի այնպիսի քաղաքում, ուր որ օրէնք առ-
 հասարակ հազու 300 նամակ էր գալիս բնակիչներին

անունով, Բացի սորանից ինքը կառավարիչը և
 ոստիկանագետը հարիւրներով նամակներ էին ստա-
 նում թէ արդեօք օրիորդը վիրաւորեալների համար
 է ժողովարարութիւն անում թէ խարբարայութիւն
 է, և նորա պարտաւորվում էին ամէնին պատաս-
 խանել: Կառավարիչը շունչ քաշելու ժամանակ
 շունէր, այնքան ընդարձակուեցաւ գործը: Օրիորդի
 նամակների թիւը սկսեց մինչև 15 հազարի
 հասնել, Ամանք ուղարկում էին զոլլարներ և մե-
 ծագումար լիկ-եր, Օրէնք երկու անգամ Շէնկի
 տնից ահագին քթոցներ էին ուղարկվում փոստը՝
 նամակներ բերել տալու համար, — Օրիորդն ուզում
 էր, որ իւր շղթան մինչև հարիւր հասնի այնպէս
 որ ծանօթներից իւրաքանչիւրը 4 նամակ ստորա-
 գրելուց յետոյ վերան նշանակէր յաջորդ թուա-
 համարը, քան ինչ թուահամարով որ ինքը նամակ
 էր ստացել: Սակայն անխայտնի է, որ օրիորդի
 լուգարիսի տեղեկութիւնները տկար էին, վասն զի
 չէր գուշակել, թէ աշխարհում այնքան մարդկանց
 բազմութիւն չի գտնուի, որ հաւասարուի (4100-ին
 (4-ի հարիւրերորդ աստիճանին), և նա չմտածեց
 փոստատան կառավարչի անհնարին տիտանական աշ-
 խատութիւնը, Սա վերջապէս այնպիսի աղմուկ բար-
 ձրացրեց, որ օրիորդը հարկադրուեցաւ լրագրի
 միջոցաւ յայտարարել իւր «անձայր շղթայի» դա-
 դարումը: Պարապ լրագրողներից մէկը հաշուել է,
 որ քսաներորդ խիւր նամակների թիւը կը լինի
 1,099,511,627,776, իսկ թէ հարիւրերորդ խմբի
 թիւը ո՛րքան կը լինի, այդ թող հաշուի պարապ
 ընթերցողը, — Բայց խօսք չկայ, որ ժողովարարու-
 թեան այս եղանակը իւր բոլոր անյարմարութիւննե-
 րով հանդերձ շատ սրամիտ է, և այդպէս առանց
 մեծ աշխատութեան բարեգործական ընկերութիւն-
 ները կարող են մեծամեծ գումարներ հաւաքել:

Ս. Մ.

† ԻՆՍՍԱՆ ԲԻՍՄԱՐԿ.

Յուլիսի 18/30-ին իւր Գրիգորիտարուհէ կա-
 լուածքում, 83 տարեկան հասակի մէջ, վախճան-
 ուեցաւ գերմանական կայսերութեան առաջին կանցլիտ
 և մեր դարի ամենամեծ պետական անձն՝ իշխան
 Օտտօ Բիսմարկ, նորա մահն այնպիսի ընդհանուր
 համակրութեան ցոյցեր յառաջ չբերաւ, ինչպէս
 քիչ ժամանակ առաջ տեղի ունեցած միւս նշանա-
 ւոր և մեծ մարդու, Պլադստոնի, մահը, երկարի
 կանցլիտը իւր աշխարհաստան քաղաքականութեամբ
 այնչափ թշնամիներ է վաստակել, որ այդպիսի
 ընդհանուր համակրութիւն վայելել չէր կարող,
 նորան բոստ արժանւոյն գնահատելու համար պէտք
 է ընդունակ լինել բոլոր կողմնակի հաշիւները մէկ
 կողմ դնելու, գերմանացու հոգւոյ մէջ թափան-
 ջելու և գերմանական հայեցակէտով կշռադատելու,
 նա Պլադստոնի պէս հանրամարդկային բնաւորու-
 թիւն չէր, այլ զուտ գերմանացի, որ կեանքը դը-

րել էր իւր հայրենիքի համար, Գերմանիան յանձին նորա շատ աւելի մեծ բան է կորցնում, քան Անգղիան յանձին Գլադստոնի, Բայց և ազգաց ընդհանուր պատմութիւնը կորցնում է մի շատ մեծ հերոսի որի կենսագրութիւնը և պատմական նշանակութիւնը մի քանի տողերի մէջ ամփոփել կանոնաւ անտեղի փորձ կլինէր. ուստի բաւականա՛նում ենք առ այժմ միայն նորա վախճանն արձանագրելով:

ԳՊՐՈՅԸ Ե ՌԻՍՈՒՅԻՉԸ.

(ԱՂՕԼՅ ԳԻՍՏԵՐՎԼԿԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՏՔԵՐԻՅ՝

(Շարունակութիւն վերջ) *

Այն վայրկեանում, երբ մարդ մի որ և է բան է անգիր անուամբ նորա հոգեկան միւս ընդունակութիւնները շեն կարող անարգել կերպով գործել, իսկ եթէ այդ անգիր անելը շատ կածախ է տեղի ունենում և կամ շատ երկար է տևում, ապա բըթացնում է հոգին, ճնշում և թուլացնում է զգացմունքը և խելքը՝ առհասարակ բոլոր հոգեկան դժերը, և հասակն առած մարդուն անգամ աւելի ապուշ է դարձնում: Ապա ուրեմն աւելի ևս վատ հետեանքներ կունենայ անգիր անելը մանկան համար, որի մէջ նոր է զարթնում հոգեւոր կեանքը:

Անգիր սովորելը միայն այն դէպքում կարող է անունդ ապա կազդուրել և ոչ թէ ճնշել ու թուլացնել մանուկ հոգին, երբ չի անցնում որոշ սահմաններից, այլ հոգեկան դժերի մի մասը թողնում է ազատ: Աւրեմն այն դէպքում միայն կարելի է անգիր սերտել, երբ այդ լինում է ուրախութեամբ և առանձին հաճոյքով, ասել է թէ, այն ժամանակ, երբ յիշողութեան նիւթը աշակերտի հասկացողութիւնից բարձր չէ, ապա և ճնշող բնոն չէ նորա համար:

Աշխարհումս մի բան չկայ աւելի զգուելի, հակակրկի և մինչև իսկ միանգամայն անբնական, քան ընթերցանութեան այն հնազարեան միակերպ անգոյն և անմիտ ձևը, որ գոյութիւն ունի մի քանի դպրոցներում: Այդպիսի ընթերցանութեան հետ կապուած է ոտանաւորների այլ և Քրիստոնէական վարդապետութեան հատուածների և վկայութիւնների միակերպ և արագ արտասանութիւնը, նմանօրինակ թմրեցուցիչ և մեքենայական պարապմունքները լաւ միջոց են խլելու երկխոյից առողջ գատողութիւնը և մարդուն դարձնելու մի վարժեցրած թուլակ, որ սերտ է իրեն անհասկանալի բաներ՝ ապարդիւն անելու մանկան անկախ մտածողութեան բոլոր փորձերը, որով նա յախտեան տհաս փիճակի մէջ պէտք է մտայ և առելի գարձնելու նորա համար ուսումն, քրիստոնէական վարդապետութիւնը, ուսումնարանն ու ուսուցիչը, եկեղեցին և քահանան:

Մեքենայական և մեռած ուսուցումը հոգեկան մահ է դպրոցի համար: Այն ինչ հոգեւոր արտասովոր ոյժ ունենալով միայն հնարաւոր է շճանձրանալ այդ լարուած աշխատութիւնից, որ կա-

պուած է միշտ միևնոյն տարրական ծանօթութեանց հետ: չընկնել հոգեկան քնոյ մէջ, շենթարկուել մահացուցիչ մեքենայականութեան և ամբողջ կեանքի ընթացքում օրէցօր ձգտել աւելի և աւելի արթնուն և կենդանի պահել հոգին: Քարանալու փոսնալը չափազանց մեծ է ուսուցչի համար, ուստի ուսուցիչները միւս մասնագիտութեամբ պարապողներից աւելի կարտուութիւն ունեն այնպիսի ազդեցութիւնների, որոնք շարունակ կեանք և արթնութիւն ներշնչել կարող են մարդուն:

Եթէ դու կամենում ես թուլանալ, միայնակ մնա՛, եթէ կամենում ես զօրեղ լինել, միացիր քո արտիզ աւելի ժօտ արհեստակիցների հետ:—Աղոճնակի մարդիկ երբեմն կարող են օգնել ուսուցիչներին և դպրոցին, բայց զլիաւոր գործը իրանք ուսուցիչները պէտք է կատարեն՝ միայն թէ ոչ բաժան բաժան, այլ միացած:

Այն ուսուցիչը, որին ոչինչ դէպի իւր գործի ընկերները չի ձգում անունով միայն ուսուցիչ է, Այն ուսուցիչը, որ պահանջ չի զգում միանալու միւս ուսուցիչների հետ, կարող է շատ հմուտ դաստու ևս լինել, բայց նորան կարելի չի լինի արժանաւոր անգամ համարել ուսուցչաց դասակարգի և նոցա ընկեր:

Ուսուցիչների դասակարգը մի ընկերութիւն պէտք է ներկայացնէ, որ ուղիղ ճանապարհի վերայ է գնում:

Մենք ոչ մի նոր բան չենք կարող արած լինել կրթութեան և ուսուցման գործում: Եթէ շնորհուրեւնք գործին մեր ամբողջ էութեամբ, անգաղար դէպի առաջ ձգտելով և զարգացնելով ու թարմացրնելով մեր հոգին, Բայց ի՞նչպէս կարող ենք հասնել այդ ամէնին, եթէ հետու մնանք գրականութիւնից և չաշխատենք ծանօթանալ նորան. եթէ կենդանի հաղորդակցութիւն չպահենք մեր գաղափարակիցների հետ, որոնք դէպի նոյն նպատակն են դիմում: և չհետեւենք նոցա քաջալերիչ ձայնին:

Մինչև անգամ հզօր հոգու տէր մարդը հաւատացած պէտք է լինի, որ ինքը միայն չէ, որ իր պէս ուրիշ մտածողներ էլ կան:

Ուսուցիչների զաշնակցութիւնը մի խաղաղ զաշնակցութիւն է, որի անդամները ժողովուրում են մտքեր փոխանակելու, իրար իրախուսելու և իրարից ուսանելու համար: Այստեղ գործ ունին ոչ թէ մնտուկներ, այլ հասակաւոր մարդիկ, որոնք շատ են փորձուելի աշխատել և մտածել և որոնք միացնում է դէպի գիտութիւն ու յառաջադիմութիւն ունեցած բուռն ձգտումը: Այստեղ արդէն ոչ թէ որ և է անձ, այլ ճշմարտութիւնը պէտք է լինի հեղինակութիւն:

Գպրոցի տուած կրթութեան չափն ուղիղ յարաբերական է ուսուցիչների գիտութեան չափին: Եթէ կամենում ենք բարձրացնել դպրոցը՝ պէտք է բարձրացնենք ուսուցիչներին:

* Տես. Աւուրսս, 1898 թ. համար Է. եր. 317: